

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՖԻԼԱՏԵԼԻՍՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ, որն ավելի հայտնի է որպես Փոստային ակումբ, և որն ստեղծվել է 1994 թվականին, շահույթ չհետապնդող միջազգային ասոցիացիա է, և կառավարվում է այն երկրի օրենքներով և կանոնակարգերով, որտեղ գտնվում է ակումբի գլխամասը: **ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՖԻԼԱՏԵԼԻՍՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ** նպատակ ունի զարգացնել ֆիլատելիստների կամ (նամականիշերի, պատմական բացիկների կամ նամակների) հավաքորդների միջև հարաբերությունները և համախմբել նրանց, ովքեր պատկանում են կամ պատկանել են ֆիլատելիայի կամ (փոստային օպերատորների) գրավոր կամ (հեռահաղորդակցությունների օպերատորների) էլեկտրոնային հաղորդակցությունների հետ կապված որևէ նախաձեռնությանը: Ֆիլատելիայի, ֆիլատելիստական մամուլի, բանակցորդների կամ հատուկ (անվտանգության չափանիշներով) տպարանների ներկայացուցիչները նույնպես ողջունվում են միանալ Փոստային ակումբին:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՖԻԼԱՏԵԼԻՍՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ կարող է ընդունել մեծահասակների կամ երիտասարդ անդամների, ովքեր չեն պատկանում վերը նշված համայնքին:

Փոստային ակումբի նպատակներն են.

- Նախապատրաստել ֆիլատելիային ու հարակից ոլորտներին վերաբերող բրիֆինգային փաստաթղթեր, զեկույցներ և ուսումնասիրություններ;
- Կազմակերպել ֆիլատելիային և ասոցիացիայի խթանմանը վերաբերող ցուցահանդեսներ, կոնգրեսներ, սեմինարներ, հանդիպումներ ու փոխանակումներ;
- Աշխատել ունիվերսալ ֆիլատելիստական ծրագրերի հետ գործընկերության մեջ;
- Կազմակերպել ֆիլատելիային այցելություններ և ուղևորություններ, ինչպես նաև վերապատրաստման սեմինարներ:

Փոստային ակումբն իր աշխատանքներն իրականացնում է եռամսյակային թերթի, միջազգային ֆիլատելիստական կառույցի, միջազգային ֆիլատելիստական վեբ-կայքի՝ www.philatelic-postal-club.org, ֆիլատելիստական փաստագրական ծառայության և Ձեզ օգնելու միշտ պատրաստ միջազգային թիմի միջոցով:

Ասոցիացիայի ավելի «երիտասարդ» անդամներին պարբերաբար ուղարկվում են անվճար նամականիշերով ծրարներ:

Տարեկան անդամավճարը մեծահասակների համար կազմում է 13.00 եվրո, իսկ 18 տարեկանից երիտասարդների համար՝ 2.00 եվրո:

Փոստային ակումբը ներկայացված է 26 երկրներում, ունենալով 250 անդամ:

Փոստային ակումբի անդամ դառնալու կամ որևէ այլ տեղեկատվության համար, խնդրում ենք հետևյալ հասցեին ուղարկել էլեկտրոնային նամակ. contact@philatelic-postal-club.org

Մեզ միանալով՝ Դուք օգնում եք ընդարձակել աշխարհում մեր ֆիլատելիստական համայնքը:

Անհամբեր սպասում ենք Ձեր նորություններին: